ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 127-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 12.12.2023ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 155-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ 1-ՈՒՄ ԵՎ 16.07.2024ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 077-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Արենի համայնքի ավագանու 12.12.2024թվականի <<2024 թվականի համար Արենի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ-ների) աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները ևապաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 155-Ա որոշման հավելված 1-ում կատարել փոփոխություններ.

հավելվածի 14-րդ տողում <<145800>> թիվը փոխարինել <<180000>> թվով, 32-րդ տողում <<220000>> թիվը փոխարինել <<314000>> թվով, ընդամենը տողում <<5621160>> թիվը փոխարինել <<5 672 360>> թվով, <<6358170>> թիվը փոխարինել <<6409370>> թվով:

2. Արենի համայնքի ավագանու 16.07.2024թվականի <<Արենի համայնքում <<Լիսա Գրիգորյանի անվան Արենիի մանկապարտեզ>> ՀՈԱԿ հիմնադրելու, ՀՈԱԿ-ի կանոնադրությունը և հաստիքացուցակը հաստատելու մասին>> թիվ 077-Լ որոշման մեջ կատարել փոփոխություններ.

ա) Որոշման վերնագրի, տեքստի և հավելվածների մեջ <<Լիսա Գրիգորյանի անվան Արենիի մանկապարտեզ>> բառերը փոխարինել <<Ջոն և Հասմիկ Մկրտչյաններ Արենիի մսուր-մանկապարտեզ>> բառերով:

բ) Որոշման հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն սույն որոշման հավելված 1-ի: